

Վիճակագրական արտադրանք – Գյուղատնտեսական համատարած հաշվառում

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
<i>Կարիքների ձևակերպում</i>		
	<p>1.1 Կարիքների բացահայտում</p>	<p>ՀՀ-ում գյուղատնտեսական համատարած հաշվառումն (ԳՀՀ) իրականացվել է 2014թ. հոկտեմբերին: ԳՀՀ արդյունքները հրապարակվել են 2016թ. դեկտեմբերին: Համաձայն միջազգային մեթոդաբանության և ՀՀ ԳՀՀ օրենքի, այն իրականացվում է 10 տարին մեկ: Հաջորդ ԳՀՀ-ն ՀՀ-ում կիրականացվի 2024թ-ին: Ներկայումս Արմատատի կողմից իրականացվում է հրապարակված ԳՀՀ արդյունքների նկատմամբ օգտագործողների պահանջարկի մշտադիտարկում: ԳՀՀ նոր հարցաթերթերը կկազմվեն հաշվի առնելով օգտագործողների կողմից վիճակագրական տեղեկատվության նկատմամբ ներկայացվող փոփոխությունները, ինչպես նաև 2020թ. իրականացվող ԳՀՀ-ի միջազգային մեթոդաբանությունը:</p>
	<p>1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում</p>	<p>Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ կազմակերպման և անցկացման մեթոդաբանությունը, ինչպես նաև ԳՀՀ հարցաշարը և դրա հիման վրա կազմված հարցաթերթերը մշակվել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցերի համաձայն, Ամերիկայի միացյալ նահանգների գյուղդեպարտամենտի փորձագետ Մայքլ Սթայների, Եվրոպական Միության «Աջակցություն Հայաստանի վիճակագրությանը» ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ներքո ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի մշտական խորհրդատու Թոմաս Բիի, Շվեդիայի վիճակագրական ծառայության գլխավոր խորհրդատու Ռոլֆ Սելանդերի, Դանիայի վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Քրիստիան Հյուլսագերի, Դանիայի վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության ենթաբաժնի պետ Քարսթեն Լարսենի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության վիճակագրության բաժնի տնօրեն Պիետրո Ջենարիի, գլխադասային գրասենյակի հաշվառման վիճակագիր Գեորգի Կվինիկաձեի, փորձագետներ Օլեգ Կարայի և Վասիլե</p>

		<p>Պետրեի, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների աջակցությամբ:</p>
	<p>1.3 Արտադրանքի նպատակների սահմանում</p>	<p>Պարբերաբար ուսումնասիրվում է վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կարծիքը՝ կապված ինչպես առաջարկվող նոր ցուցանիշների ընդգրկման, այնպես էլ առկա ցուցանիշների վերաբերյալ նրանց վերաբերմունքի, ակնկալիքների ու պահանջմունքների ուսումնասիրման հետ՝ ինչպես հեռախոսագանգերի, այնպես էլ Արմստատի պաշտոնական կայքում առկա «Օգտագործողների բավարարվածության հետազոտության հարցաթերթի» միջոցով (տես՝ https://www.armstat.am/am/?nid=131 հղումը):</p>
	<p>1.4 Հասկացությունների որոշում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>ԳՀՀ իրականացման արդյունքում հավաքված վիճակագրական տվյալները օգտագործվում են դիտագննումային (մոնիթորինգային) ցուցանիշների համակարգերի ձևավորման համար՝ աղքատության դիտագննում, պարենային անվտանգության դիտագննում, գյուղատնտեսության ծրագրավորում և այդ ոլորտում քաղաքականության մշակում, ըստ սեռային բաժանման վիճակագրության վարում, ընթացիկ վիճակագրության որակի բարելավում, օգտագործողներին առավել ընդգրկուն տեղեկատվության տրամադրում և այլն: ԳՀՀ-ով հավաքված վիճակագրական տվյալները հնարավորություն են ընձեռում բարելավել գյուղատնտեսության ոլորտի ընթացիկ վիճակագրությունը, ձևավորել գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների ամբողջական համակարգ, ձևավորել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների վիճակագրական ռեգիստրներ, կատարելագործել վիճակագրության ընտրանքային գործիքները և ապահովել դրանց համապատասխանությունը գործող միջազգային չափանիշներին և չափորոշիչներին, բացահայտել գյուղատնտեսության ենթակառուցվածքների փոփոխությունների միտումները, հստակեցնել գյուղատնտեսության, որպես ձեռնարկատիրության</p>

		<p>(տնտեսական գործունեության տեսակի) առավել մանրամասն կազմն ու կառուցվածքը:</p> <p>ԳՀՀ միջոցով հավաքված տեղեկատվությունն իր կիրառությունը կգտնի այնպիսի գործընթացներում, ինչպիսիք են գյուղատնտեսության բնագավառում ռազմավարությունների մշակումը, մարտավարական խնդիրների լուծումը, բիզնես միջավայրի վերլուծությունը, ոլորտի զարգացման միտումների բացահայտումը և այլն:</p>
	<p>1.5 Տվյալների առկայության ստուգում</p>	<p>ԳՀՀ անց է կացվել ՀՀ ողջ տարածքում՝ բոլոր համայնքներում: Տվյալների հավաքումն իրականացվել է համատարած և ընտրանքային եղանակներով.</p> <p>-գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և խմբային տնտեսությունները - համատարած, հարցաթերթի ինքնուրույն լրացում, -անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններ - համատարած, հարցաթերթի լրացում հաշվարարների կողմից հարցման միջոցով, -այգեգործական ընկերությունների անդամների և գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքաբնակների անհատական տնտեսություններ - ընտրանքային, հարցաթերթի լրացում հաշվարարների կողմից հարցման միջոցով:</p> <p>Հաշվառման արդյունքները ներկայացուցչական են երկրի, գյուղ/քաղաք, ք.Երևանի, մարզերի և համայնքների կտրվածքով:</p>
	<p>1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում</p>	<p>Մինչև ՀՀ ՎՊԽ կողմից անհատական որոշումով հարցաթերթի հաստատումը, իրականացվում է դրանում ներառված ցուցանիշների և դրանց վերաբերյալ լրացման հրահանգի մասով աշխատանքային քննարկումներ Արմատատի մարզային վարչությունների աշխատակիցների և վիճակագրական տեղեկատվությունը հավաքող վիճակագիրների հետ, հնարավորության դեպքում հաշվի է առնվում նաև միջազգային փորձագետների կարծիքը:</p>
<p><i>Նախագծում</i></p>		
	<p>2.1 Արդյունքների նախագծում</p>	<p>Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ընդունվել է 27.11.2008թ.), Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների</p>

		(2013 թվականի ապրիլի 25-ի թիվ 402-Ն և 2013 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1054-Ն) և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշումների և իրավական այլ ակտերի հիման վրա:
	2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում	Տեղեկատվությունը հավաքվում է տասը տարին մեկ անգամ:
	2.3 Տվյալների հավաքման նախագծում	Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից անհատական որոշմամբ հաստատված հարցաթերթի միջոցով: Տեղեկատվության հավաքումն իրականացվում է ընտրանքային և համատարած եղանակներով:
	2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում	Գլխավոր համակցության նախագծումն իրականացվում է գյուղատնտեսության կառուցվածքի՝ գյուղատնտեսական նշանակության հողեր, անասնազվիաքանակ, գյուղատնտեսական տեխնիկա, գյուղատնտեսական նշանակության շինություններ, առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրա օգտագործման վերաբերյալ հնարավորինս ամբողջական տեղեկատվության ապահովման նպատակով: Ստացված տեղեկատվությունն ամփոփվում է ըստ գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների, հանրապետության, մարզային և համայնքային կտրվածքով կտրվածքով:
	2.5 Մշակման և վերլուծության նախագծում	Գյուղատնտեսական համատարած հաշվառման ժամանակ տվյալների հավաքումն իրականացվել է հետևյալ մեթոդներով. ա. գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և խմբային տնտեսությունները - համատարած, հարցաթերթի ինքնուրույն լրացում, բ. անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններ - համատարած, հարցաթերթի լրացում հաշվարարների կողմից հարցման միջոցով, գ. այգեգործական ընկերությունների անդամների և գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքաբնակների անհատական տնտեսություններ - ընտրանքային, հարցաթերթի լրացում հաշվարարների կողմից հարցման

միջոցով:

Գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և խմբային տնտեսությունները (քրեակատարողական հիմնարկներ, զորամասեր, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ, գիտափորձարարական ստորաբաժանումներ) հարցաթերթն ինքնուրույն լրացրել և տրամադրել են՝ համաձայն Արմատատի և ոլորտի պատասխանատու համապատասխան գերատեսչության հետ համատեղ մշակած կարգի (ներառվել է նաև Հայ Առաքելական Եկեղեցի Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը):

Հաշվարարի կողմից տնտեսություն այցելելու և հարցման միջոցով լրացվել է անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների, գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքացիների և այգեգործական ընկերությունների անդամների անհատական տնտեսությունների հարցաթերթերը:

Կատարվել է հաշվարարների կողմից տների նախնական շրջայց:

Գյուղատնտեսությամբ զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից լրացվել և Արմատատի են տրամադրվել գյուղատնտեսական համատարած հաշվառման 3-ԳՀՀ հարցաթերթը:

Հանրապետության 866 գյուղական և 49 քաղաքային համայնքների ղեկավարների կողմից լրացվել և Արմատատ են տրամադրվել գյուղական և քաղաքային համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 2-ԳՀՀ հարցաթերթը (գյուղական համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքի վերաբերյալ):

Կարևորելով ԳՀՀ արդյունքներով ստացված տվյալների որակի ամբողջականությունը, հաշվառման միավորների ծածկույթը և հաշվառման գործընթացում առաջացած անճշտությունների տեսակներն ու չափերը գնահատելու նպատակով, գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների հավաքումն ավարտելուց հետո, 2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացվել է հետգյուղատնտեսական հաշվառում (ՀԳՀ), որն անկախ վիճակագրական հետազոտություն/հարցում է: Պատահական ընտրանքի միջոցով այն իրականացվել է հանրապետության 10 մարզերի 134 գյուղական և քաղաքային համայնքներում՝ 134 հաշվարարների և 25 հրահանգիչ-հսկիչների

		միջոցով:
	2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում	Վիճակագրական տեղեկատվության հավաքումից մինչև դրանց հրապարակումն իրականացվել են ԳՀՀ հարցաթերթերի ստուգման, ծածկագրման և մուտքագրման, ինչպես նաև ԳՀՀ արդյունքում հավաքված վիճակագրական տվյալների ճշգրտման և ԳՀՀ արդյունքներով հրապարակվող ցուցանիշների կառուցվածքի (հրապարակումների ձևաչափեր, էլքային աղյուսակներ և այլն) ձևավորման շուրջ տարվող աշխատանքներ:
<i>Կառուցում</i>		
	3.1 Հավաքման գործիքի կառուցում	Տեղեկատվության հավաքման իրականացման և դրա համար անհրաժեշտ հարցաթերթերի, դրանց լրացման հրահանգների հասանելիության ապահովման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային միջոցներ:
	3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Առկա են տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման ծրագրային ապահովման փաթեթում առկա է մուտքագրված տվյալների թվաբանական ու տրամաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ:
	3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ:
	3.4 Գործընթացների կարգավորում	Վիճակագրական արտադրանքի ստացումը իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝ <ol style="list-style-type: none"> 1. տեղեկատվության հավաքում, 2. հարցաթերթերի ստուգում, ծածկագրում և տեղեկատվության մուտքագրում նախապես մշակված համակարգչային մուտքագրման ծրագրի միջոցով, 3. ԳՀՀ արդյունքներով հրապարակվող ցուցանիշների կառուցվածքի (հրապարակումների ձևաչափեր, էլքային աղյուսակներ և այլն) ձևավորում 4. տեղեկատվության տարածում՝ ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
	3.5 Արտադրության համակարգի փորձարկում	Պայմանավորված հարցաթերթում ցուցանիշների փոփոխությունների հետ, մուտքագրման ծրագրային ապահովման փաթեթը կենթարկվի համապատասխան փոփոխությունների: Ըստ

		անհրաժեշտության կիրականացվի նաև ծրագրային ապահովման միջոցների թեստավորում:
	3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում	Վիճակագրական նոր ցուցանիշների հարցաթերթում ընդգրկմանը զուգահեռ կիրականացվի ցուցանիշի ընկալման փորձարկում վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների հետ:
	3.7 Արտադրության համակարգի վերջնականացում	Իրականացվում են հարցաթերթերում առկա ցուցանիշների լրացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումների կազմում և տրամադրում վիճակագրական տեղեկատվություն տրամադրողին (ռեսպոնդենտին)՝ միաժամանակ օգտագործելով նաև վիճակագիրների և մարզային վարչության աշխատակիցների հետ համապատասխան մասնագետների բանավոր և էլեկտրոնային փոստի միջոցով շփումները:
<i>Հավաքում</i>		
	4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում	Տեղեկատվության հավաքումն իրականացվում է ընտրանքային և համատարած եղանակով:
	4.2 Հավաքման կազմակերպում	ԳՀՀ իրականացման ժամանակ վիճակագրական տեղեկատվության հավաքման կազմակերպման համար իրականացվում է դիտարկման ենթակա միավորներից տեղեկատվության հավաքման համար կազմված համապատասխան հարցաթերթերի և դրա լրացման հրահանգների տպագրության պատվերի ձևավորում, դրանց տպագրություն և բաշխում: Հաջորդ ԳՀՀ-ի իրականացման ժամանակ հնարավոր է էլեկտրոնային եղանակով հարցաթերթի հավաքման համար անհրաժեշտ ցանցային միջոցների ներդրում:
	4.3 Հավաքման իրականացում	Սկզբնական վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է. - գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և խմբային տնտեսությունները - համատարած, հարցաթերթի ինքնուրույն լրացում, - անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններ - համատարած, հարցաթերթի լրացում հաշվարարների կողմից հարցման միջոցով, - այգեգործական ընկերությունների անդամների և գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքաբնակների անհատական տնտեսություններ - ընտրանքային, հարցաթերթի լրացում հաշվարարների կողմից հարցման միջոցով:
	4.4 Հավաքման	Հավաքված տեղեկատվությունը ստուգման և

	վերջնականացում	Ծածկագրման ենթարկվելուց հետո մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումը իրականացվում է ինչպես մեխանիկական, այնպես էլ տեղեկատվությունը էլեկտրոնային միջավայր անմիջապես ներածելու եղանակով:
<i>Մշակում</i>		
	5.1 Տվյալների ինտեգրում	Իրականացվում է Արմատատի կողմից հավաքվող տեղեկատվության միավորում մեկ միասնական տվյալների բազայում, որի արդյունքում բացառվում են կրկնությունները:
	5.2 Դասակարգում և կոդավորում	Իրականացվում է մարզային և տարածքային միավորների կոդավորում՝ համաձայն նախապես սահմանված կարգի:
	5.3 Վերանայում և հաստատում	Կարևորելով ԳՀՀ արդյունքներով ստացված տվյալների որակի ամբողջականությունը, հաշվառման միավորների ծածկույթը և հաշվառման գործընթացում առաջացած անճշտությունների տեսակներն ու չափերը գնահատելու նպատակով, գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների հավաքումն ավարտելուց հետո, իրականացվում է հետգյուղատնտեսական հաշվառում (ՀԳՀ), որն անկախ վիճակագրական հետազոտություն/հարցում է: Պատահական ընտրանքի միջոցով այն իրականացվում է հանրապետության տարբեր մարզերի 100-ից ավել գյուղական և քաղաքային համայնքներում՝ հաշվարարների և հրահանգիչ-հսկիչների միջոցով:
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	Իրականացվում է բացակայող տեղեկատվության համալրում հիմնականում համայնքների ղեկավարների կողմից տրված գնահատականների հիման վրա՝ դրանց վերաբերյալ այլընտրանքային տեղեկատվության բացակայության դեպքում:
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	Գնահատումներ և լրահաշվարկներ այլ ցուցանիշների հաշվարկման համար առկա չեն:
	5.6 Կշիռների հաշվարկում	Քանի որ հավաքվող տեղեկատվությունն ապահովում է այդ ոլորտի վիճակագրության ամբողջականությունը, հետևաբար լրացուցիչ կշիռների հաշվարկման անհրաժեշտություն չի առաջանում:
	5.7 Ագրեգատների հաշվարկում	Մուտքագրված տեղեկատվության հիման վրա իրականացվում է ամփոփ տվյալների ստացում ըստ առանձին վիճակագրական ցուցանիշների՝ նախապես մշակված համակարգչային ծրագրի

		միջոցով:
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	Իրականացվում են աշխատանքներ ԳՀՀ արդյունքում հավաքված վիճակագրական տվյալների ճշգրտման և ԳՀՀ արդյունքներով հրապարակվող ցուցանիշների կառուցվածքի (հրապարակումների ձևաչափեր, էլքային աղյուսակներ և այլն) ձևավորման շուրջ: Վերջնական տվյալները հրապարակվում են:
<i>Վերլուծություն</i>		
	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	-
	6.2 Արդյունքների վավերացում	Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն նախապես սահմանված դասակարգումների, մեթոդաբանական ուղեցույցների և հարցաթերթերի լրացման հրահանգների:
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում:
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է դրանց գերծ լինելը անհատական (անվանական) տեղեկություններից, «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի:
	6.5 Արդյունքների վերջնականացում	Մինչ ամփոփ տեղեկատվության տարածումն իրականացվում է հրապարակումների ձևաչափերի և էլքային աղյուսակների կազմման աշխատանքներ:
<i>Տարածում</i>		
	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	Իրականացվում են հրապարակման ենթակա վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան աղյուսակների, ժողովածուների վերջնական ճշգրտման աշխատանքներ, ինչպես նաև կատարվում է դինամիկ շարքերի արդիականացում: Անհրաժեշտության դեպքում նաև փոփոխություններ և/կամ լրացումներ են կատարվում համապատասխան ցուցանիշի հասկացություններում և մեթոդաբանական պարզաբանումներում:
	7.2 Տարածման արտադրանքների	Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝

	արտադրում	բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների, քարտեզների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին: Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ եռալեզու տեղեկատվությունը հրապարակվել է ներքոհիշյալ վիճակագրական ժողովածուի միջոցով. «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի Գյուղատնտեսական համատարած հաշվառման» հիմնական արդյունքները վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն և ռուսերեն): Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն, ռուսերեն և անգլերեն հետևյալ https://www.armstat.am/am/?nid=82&id=1860 :
	7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում	Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի:
	7.4 Տարածման արտադրանքների խթանում	-
	7.5 Օգտագործողների աջակցության կառավարում	Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից չհրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ հաշվարկ (անհրաժեշտության դեպքում) և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով սկզբնական վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:
	Գնահատում	
	8.1 Գնահատման միջոցների հավաքում	-
	8.2 Գնահատման իրականացում	-
	8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում	-